ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վարչության առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 18/1-4.1-1) ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնելու համար դիմում են ներկայացրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ Գայանե Գերասիմի Վարդանյանը և Աննա Ժորժիկի Թադևոսյանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 10.07.2018թ. N 792-Ն որոշման հավելվածի 8-րդ կետի համաձայն ս.թ. հուլիսի 16-ին Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատարի մոտ կազմակերպվել է հարցազրույց, որին ներկա են եղել Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալ Ռուզան Հարությունյանը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վարչության պետ Արմեն Սերգոյանը և քարտուղարության պետի պարտականությունները կատարող Արթուր Սիմոնյանը: Իրականացված հարցազրույցի ընթացքում թեկնածուները դրսևորել են անբավարար գիտելիքներ և չեն համապատասխանել պաշտոնի անձնագրում ներկայացված պահանջներին:

Քննարկման արդյունքում ներկայացված անձանցից ոչ մեկը չի ընտրվել:

Ջրային կոմիտեի գլխավոր
քարտուղարի պաշտոնակատար Սամսոն Զատիկյան

16 հուլիսի 2019թ.